ԵՐՆՋԱՏԱՓԻ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

ՀՀ Ապարանի շրջանի Հարթավան գյուղից Երնջատափ տանող ճանապարհից ձախ, քասախ գետի ձախ ափին, երկու ձորերի միախառնումից առաջացած հրվանդանի գագաթնային մասում պահպանվել են պարսպափակ մի ընդարձակ բնակավայրի և նրա ամենաբարձր կետում տեղադրված քառանկյուն դղեակի ավերակները։ Տեղացիներն այն անվանում են «Թագավորի քոշք» և այս ավերակնե-

Բնակավայրը գտնվում է պատմական Նիգ գավառի համարյա կենտրոնական մասում։ Արայի լեռան հյուսիսահայաց այս ստորոտները երևան են բերում խիստ հարուստ և բազմաշան պատմամշակութային հուշարձանների մի ամբողջ բազմություն։ Երնջատափ գյուղից հարավ և արևելք ընկած են միջին և ուշ բրոնզի, վաղ երկաթի ժամանակաշրջանին վերաբերող դամբարանադաշտեր։ Բուն գյուղում



Գծ. 1. Երնջատափի ամրոց-բնակավայրի գլխավոր հատակագիծը։

ռի հետ կապում են մի ավանդություն, ըստ որի գառնարած մի աղջիկ տեսել է, թե ինչպես են մկները բնակավայրից հանում ոսկյա գրամները։

պահպանվել են XIV դ. եկեղեցու սալահատակի մնացորդները և դրան կից XIV—XVI դդ. գերեզմանոցը, կանգուն է XIX դ. կառուցված Ս. Նշան եկեղեցին։ Ամրոց-բնակավայրի ուղիղ

դիմաց, Քասախ գետի աջ ափի մի հարթակի վրա բարձրանում է ս. Աստվածընկալ վանքը (VI—XIII դդ.)։ Վանքից մոտ 0,8 կմ Քասախի հոսանքն ի վար, գետի ձախ ափին, Երնջատափ վտակի միախառնման տեղում գտնըվում է մի անպարիսպ ընդարձակ բնակատեղի։ 1988 թ. ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի նորակառույցների հնագիտության բաժնի արշավախմբի պեղումներով այստեղ բացվել են IX—XIV դդ. վերաբերող քաղաքասի մի հատվածը, վաղ միջնադարում կառուցված և հետագայում որոշ փոփոխություններ կրած մատուռ-դամբարանը՝ ընդարձակ տապանաքարով, միջնադարյան գերեզմանոցը և մի շարք հուշակոթողներ[1]։ Այս բնակավայրից մոտ 0,5—0,6 կմ դեպի ներքև, ուր Քասախը ծունկ է տալիս, գետի աջ ափին նկատվում են IX—X դդ. եկեղեցու, գերեզմանոցի, մի քանի աշխարհիկ շինությունների և այս բոլորը շրջափակող պարիսպների հետքեր։

Քասախի հովտի այս հատվածում կատարած դիտումները հնարավորություն ընձեռեցին պարզելու, որ Քասախ ավանից դեպի Սևանի ավազան տանող պատմական ճանապարհը դուրս է եկել ս. Աստվածընկալի հարավից և անցել գետը, ապա մոտ 0,8 կմ գետի ձախ ափն ի վար իջնելով՝ անպարիսպ բնակավայրի միջով բարձրացել է դեպի Արաջի նախաստորոտը։ Ըստ երևույթին ինքը առարկա ամրոց-բնակավայրը կարևոր ռազմավարական նշանակություն է ունեցել՝ հսկելով Քասախի կիրճը և գետանցումը*։

Ամրոց-բնակավայրի հորինվածքային կենտրոնը միջնաբերդն է, որից արևելք, արևմուտք և հարավ տարածվել է 0,88 հա տարածք զբաղեցնող պարսպափակ բնակավայրը (գծ. 1)։ Այս տարածքը հյուսիս-արևմուտքից և հարավ-արևելքից եզրագծում են ուղղաձիգ ժայռերը, որոնք պարփակում են պարիսպներով։ Արևելյան և արևմտյան կողմերում բնակավայրի պարիսպները բարձրանալով միանում են համապատասխանաբար կողմնորոշված աշտարակներին։ Պարիսպները լիովին կրկնում են ժայռերի ուրվագիծը՝ պահպանելով դրանց դագաթնային մասը։ Բնական պաշտպանվածության տեսակետից ավելի հարմար են հարավային և արևելյան հատվածները։ Բնակավայրի մուտքը ենթադրվում է հարավային և արևմտյան պարսպապատերի միացման կետում (գծ. 1, I)։ Այստեղ երևում են ստորոտից դեպի ամրոցը բարձրացող ճանապարհը և բնական ժայռերի միջև բնակավայր առաջնորդող բացվածքը։ Բնակավայրի սարահարթը մասնատված է չորս դարավանդներով, և անկումը միջնաբերդից մինչև հրվանդանի ծայրը կազմում է 19,0 մ։ Բնակավայրի արևմտյան հատվածը, ելնելով առկա հետքերից, պաշտպանված է եղել կրկնապարիսպով։ Փոքր-ինչ խոցելի է նաև միջնաբերդի հյուսիսային աշտարակից դեպի կիրճը իջնող հատվածը։ Այստեղ ձորի երկայնքով ձգվում է մի դարավանդ, որտեղով թշնամին կարող էր շրջանցել ամրոցը արևմտյան կողմից և հայտնվել բնակավայրի հյուսիս-արևմտյան պարիսպների տակ։ Նման անտկընկալը կանխելու համար շինարարները ամրացրել են այդ հատվածը 20 մ ձգվող զանգվածեղ պարսպով, ապահովելով առավել մեծ պաշտպանունակություն։ Բնակատեղին, ըստ երևույթին, արդեն ուշ միջնադարում վերածվել էր հանդի, ուստի նրա տարածքում շինությունների ակնհայտ հետքեր չկան։

Միջնաբերդը հատակագծում շեղանկյուն է՝ 40×38 մ չափերով՝ կարճ անկյունագծով ուղղված հարավից-հյուսիս (գծ. 2)։ Պարսպապատերը լավ պահպանված են և բոլոր չորս անկյուններում ամրացված են բոլորակ աշտարակներով։ Առավել մեծ հաստություն և ամրություն ունեն հյուսիս-արևելյան պարսպապատն ու հյուսիսային և արևելյան աշտարակները (նկ. 1)։ Այսպես, նշված պարսպի հաստությունը 2,7 մ է, իսկ մնացած պարիսպներինը՝ 1,6 մ։ Հյուսիսային և արևելյան աշտարակները նույնպես ավելի հաստ են, քան մյուսները (արտաքին տրամագիծը 7,0 մ, հաստությունը՝ 3,0 մ)։ Ընդ որում մնացած բոլոր պատերն ունեն ամրոցի ներքին բակի

---

1 Հ. Լ. Պետրոսյան, Ս. Գ. Հորոսյան, Երնջատափի միջնադարյան բնակավայրի 1988 թ. պեղումները (ՀԽՍՀ-ում 1987—1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1989, էջ 95—97)։

* Երնջատափի ամրոց-բնակավայրը հարևանցիորեն հիշատակում է Վ. Մ. Պետրոսյանցը (տե՛ս Նիգ-Ապարանի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1988, էջ 25)։ Ընդ որում հեղինակը չի խոսում պարսպափակ բնակավայրի մասին և ներկայացնում է միայն միջնաբերդը, այն համարելով վտանգի դեպքում ս. Աստվածընկալի միաբանների և շրջակա բնակչության պատսպարման վայր։ Հուշարձանի նախնական հետազոտություններին աչակցելու համար շնորհակալություն ենք հայտնում Երնջատափ գյուղի բնակիչ Ն. Աբրահամյանին։

շարք դասավորված կցակառույցներ, բացի հյուսիս-արևելյանից*։

գործվել են 1,2—1,5 մ երկարության հասնող քարեր, որոնք պատի համար ունեն նաև հո-



Գծ. 2. Միշնաբերդի հատակագիծը։



Նկ. 1. Ամրոցի արևելյան աշտարակը և արևելյան պարսպապատի մի հատվածը։

Ամրոցի պարիսպները շարված են վաղ միջնադարին բնորոշ եռաշերտ շինարարական տեխնիկայով, ընդ որում հիմքին մոտ օգտագործվել են 1,2—1,5 մ երկարության հասնող քարեր, որոնք պատի համար ունեն նաև հորիզոնական ամրակապի դեր։ Պետք է ասել, որ նման տեխնիկան տարածված է եղել ոչ միայն աշխարհիկ, այլև պաշտամունքային շինությունների կառուցման ժամանակ։ Պատերի վերնամասը, ինչպես և ներքին բակի կցակառույցները շարված են միջին մեծության տուֆ քարերով, որոնց արանքում լցված է քարա-

* Հյուսիս-արևմտյան պարսպին կից շինություններ են կառուցված նաև արտաքին Ներահայաց կողմից։

հողային լիցք, որը կապակցող նշանակություն ունի։ Կցակառույցների որոշ միջնապատեր ունեն եղենաձև շարվածք։

Թե՛ հորինվածքային տիպով և թե՛ շինարարական տեխնիկայով Երնջատափի ամրոցը-բնակավայրը տիպիկ վաղ միջնադարյան պաշտպանական համալիր է և սերտ աղերսներ ունի համաժամանակյա մի շարք հուշարձանների հետ (Հացավան, Դիտակ, Զաքարիբերդ, Աշնակ, Վարդենուտ, Կոչ, Հոռոմ)[2]։ Ամրոցի տարածքից հավաքած վերդետնյա նյութը, որը հիմնականում ներկայանում է հասարակ խեցեղենի բազմաթիվ օրինակներով, նույնպես վկայում է, որ ամրոցը գործել է վաղ միջնադարում։

Միջնաբերդի ներսում պահպանված շինությունները դասավորված են պարիսպների երկարությամբ (ինչպես նշվեց, կցակառույցներ չունի միայն հյուսիս-արևելյան պարիսպը)։ Դրանք ենթարկված են միասնական հատակագծային հորինվածքին՝ բոլոր մուտքերը բացվում են դեպի ներքին բակը, ներքին ընդհանուր պատը ձգվում է պարիսպներին զուգահեռ։ Միջնաբերդի տարածքի գերակշիռ մասը կազմում է ներքին բակը։ Այս տեսակետից ներքին բակի ընդարձակությունը համահնչուն չէ պարսպակից շինությունների խիտ կառուցապատմանը։ Քանի որ կառուցապատումը իրականացվել է միասնական հատակագծային սկզբունքով, ապա մնում է ենթադրել, որ կամ ներքին բակն ունեցել է ինչ-որ հատուկ նշանակություն, կամ էլ, որ ավելի հավանական է, բակում տեղադրված են եղել առանձին կանգնած ինչ-որ շինություններ (կամ շինություն), որոնք մեզ չեն հասել։

Հորինվածքային լուծումով ամրոցը պատկանում է քառանկյուն դղյակների տիպին, որոնց մշակումը Հայաստանում ըստ երևույթին սկսվել է մ. թ. առաջին դարերում և սերտորեն կապված էր ավատական կարգերի ձևավորման և նախարարական կազմակերպության առաջընթացի հետ, երբ միասնական պետական պաշտպանական համակարգը փոխարինվում էր առանձին օղակներից բաղկացած անջատ համակարգով։ Այս համակարգի վաղ օրինակներից են Հացավանի և Դիտակի ամրոցները[3]։

Ինչպես նշեցինք, Երնջատափի ամրոցը-բնակավայրը ներկայանում է որպես դղյակ-ամրոցի և ամրացված բնակավայրի միասնական համալիր։ Այս առումով հետաքրքիր է Սեբեոսի պատմության մեջ հիշատակված «գյուղաքաղաքը, որի մասին պատմիչը գրում է. «Եվ հասեալ հանկարծաւրեն պատեցին պաշարեցին զգիւղաքաղաքն, զի ունէր զեւղն պատուար ամրութեան շուրջ զիւրեաւ շուրջանակի։ Յայնժամ հրաման տայ Սմբատ երեք-հարիւրայ անկանել ի բերդակն. որ ի մէջ գիւղաքաղաքին...»[4]։

Այստեղ ակնհայտ է բնակավայրի բնորոշման ժամանակ զուտ արտաքին՝ կառուցապատման չափանիշներին առաջնություն տալը[5], այսինքն՝ Սեբեոսը այս բնակավայրը գյուղաքաղաք է անվանում, քանի որ՝ ա) այն «շուրջանակի» ամրացված է և բ) ունի դղյակ։ Տվյալ դեպքում այդպիսի արտաքին նշանն-

---

[2] Գ. Ա. Տիրացյան, Հացավան ամրոցի 1961 թ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր հաս. գիտ. 1962, № 11, էջ 80—84), Նույնի՝ Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., 1963, № 12, էջ 108—110), Նույնի՝ Культура древней Армении: VI в. до н. э.—III в. н. э., Ереван, 1988, с. 158—160, рис. 41; Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսով, Դիտակի և Տաճարարակի հետախուզական պեղումներ (ՀՍՍՀ-ում հնագիտական հետազոտություններին նվիրված զեկուցումների թեզիսներ (1975—1976 թթ.), Երևան, 1977), Е. А. Асатрян, Раннесреднекевовые крепости-поселения Армении (по материалам памятников Арагацотна), канд. дисс., Ереван, 1989, с. 17—40; Լ. Վ. Կիրակոսյան, Զաքարի-բերդի բնակելի համալիրների ճարտարապետությունը (Բանբեր Երևանի համալսարանի, 1989, № 2, էջ 87—97), Նույնի՝ Զաքարի-բերդ ամրոց-բնակավայրի պաշտպանական համակարգը (ՀՍՍՀ-ում 1987—1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1989, էջ 74—76), Գ. Հ. Կարախանյան, Հ. Ա. Մելքոնյան, Վարդենուտ (պեղումների արդյունքները) (ՀՍՍՀ-ում 1987—1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1989, էջ 80—83)։

[3] Գ. Ա. Տիրացյան, նշվ. աշխ., Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսով, նշվ. աշխ.։

[4] Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Վ. Գ. Արգարյանի, Երևան, 1975, էջ 602։

[5] Միջնադարյան «գիւղաքաղաք» կոչվող բնակավայրերի բնորոշման չափանիշների մասին մանրամասն տե՛ս Հ. Լ. Պետրոսյան, Գառնին IX—XIV դդ., Երևան, 1988, էջ 116—125։

քով բնակավայր է եղել և Երնջատափի քրնեվող հուշարձանը։

Վաղ միջնադարյան նման հուշարձանները համարյա ուսումնասիրված չեն[5]։ Ուստի այս հուշարձանի պեղումները կարող են հիմք դնել վաղ միջնադարի «գիւղաքաղաք» կոչվող ամրոց-բնակավայրերի բաղմակողմանի ուսումնասիրությանը։

---

6 Երնջատափի ամրոց-բնակավայրը իր հատակագծային լուծումով մոտենում է համաժամանակյա մեկ ուրիշ՝ Թալինի Ջուլհակբլուր ամրոց-բնակավայրին։ Միջնաբերդը հատակագծում ունի անկանոն՝ ուղղանկյանը մոտեցող ձև և 65×45 մ չափեր։ Բնակավայրը տարածվում է դեպի հյուսիս-արևմուտք և զբաղեցնում է 0,8 հա տարածություն։

Հ. Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լ. Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ